

նախընտրված և վիճակի չեղան ամգամ լուծել պետության առջև ծառայած կենսական հարցերը, ինչն էլ տեղիք տվեց հեղափոխական ցնցումների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] <i>Игнатъев А.В. С.Ю. Витте-дипломат. М., 1998, с.59.</i>	[12] Նույն տեղում:
[2] <i>Тунян В.Г. С. Сазонов и армянский вопрос. Ереван: Диалог, 1997, с. 28.</i>	[13] Նույն տեղում, էջ 380:
[3] <i>Հարությունյան Ա., Յարական և ժամանակակից կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճած տերիտորիայում 1915-1917թթ., Բանիքի Հայաստանի արխիվների, Ե., 1971, էջ 160:</i>	[14] Նույն տեղում:
[4] <i>Մրտինյան Ա., Հայաստանը 1914-1917, Ե., 1969, էջ 269:</i>	[15] Նույն տեղում, էջ 367:
[5] <i>Чалхушиян Г. Красная книга, Р-Д., 1919, 105 с.</i>	[16] Նույն տեղում:
[6] <i>Киракосян Дж. Западная Армения в годы первой мировой войны. Е., 1971, 419 с.</i>	[17] Նույն տեղում, էջ 399:
[7] <i>Арутюнян А.О. Кавказский фронт 1914-1917 гг. Е., 1971, 31 с.</i>	[18] <i>Армянский вопрос в Гос. Думе. — Армянский вестник, Ереван, 4, 1916, с. 1.</i>
[8] Նույն տեղում, էջ 316:	[19] Նույն տեղում, №8, էջ 1:
[9] <i>Киракосян Дж. Западная Армения в годы первой мировой войны. Е., 1971, 419 с.</i>	[20] <i>Арутюнян А.О. Кавказский фронт 1914-1917 гг. Ереван, 1971, с. 366.</i>
[10] <i>Арутюнян А.О. Кавказский фронт 1914-1917 гг. Е., 1971, с. 319.</i>	[21] <i>Тунян В.Г. С. Сазонов и армянский вопрос. Ереван: Изд-во "Диалог", 1997, 6, с. 29.</i>
[11] <i>Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1823), խմբ. Ջ. Կիրակոսյան, Ե., 1972, էջ 379:</i>	[22] <i>Докладная записка мин. Ин. Дел С. Сазонова Совету Министров по Армянскому вопросу. — Армянский вестник, (возобновленное издание). Ереван, 3-4, 1998, с. 188.</i>
	[23] Նույն տեղում, էջ 190:
	[24] Նույն տեղում:
	[25] Նույն տեղում:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԲԻՆ ԸՄԱՎԵՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐԵԱՀԱՅԱՍՏԱՆԸ

Մարության Ա.

« ԳԱԱ հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ »

Марукян А. Внешняя политика Временного правительства и Турецкая Армения. После Февральской революции власть в России перешла к Временному правительству, которая находилась под непрерывным дипломатическим давлением со стороны союзных держав. Временное правительство сделало несколько попыток восстановить положения соглашения Сайкса-Пико в отношении раздела Турции и в частности — Западной Армении. Однако соотношение сил уже явно было на стороне Англии и Франции, которые диктовали условия России. Союзниками был отклонен также предложенный Россией вопрос о предоставлении Западной Армении права на самоопределение. За 8 месяцев своего существования Временное правительство не смогло осуществить принятые решения и завершить важные внешнеполитические инициативы.

Marukian A. The Foreign policy of Temporary government and Turkish Armenia. After the February revolution the power in Russia passed to Temporary government, which was upon unbroken diplomatic pressure of allied powers. The Temporary government made some attempts to restore the positions of Saics-Pico agreement about the division of Turkey and particularly of the Western Armenia, but the allied powers declined even the question of autonomy of the Western Armenia, suggested by Russia. The Temporary government could not realize any Foreign policy decision or initiative.

Փետրվարյան հեղափոխությունից մի քանի օր առաջ շարական կառավարության վերջին արտաքին գործերի նախարար Պեղամակիմն առաջ քաշեց 1915-1916թթ. համաձայնությունների, այդ թվում Մայրս-Պիկոյի պայմանագրի, իրական ապահովման հարցը: 1917թ. փետրվարի 21-ին Նիկոլայ Ա-ին տրոփված զեկուցագրում նախարարը գրում է. «Որևէ ձևով չնվաստացնելով նեղուցների մասին փաստաթղթերը, այնուամենայնիվ, գտնում եմ սխալ կիներ կարծել, որ միայն դրանցով մենք ի վիճակի ենք իրականացնել մեր գլխավոր ձգտումները և ցանկացած պարագայում կտանանք այն ամենը, ինչ նախատեսված է փաստաթղթերում: Անկասկած է, որ պատերազմի աշխարհագրական քարտեզի ներկա վիճակը խաղաղության բանակցությունների սկսման պահին կունենա վճռական նշանակություն այդ քաղաքական ծրագրերը կյանքի կոչելու համար: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում տիրանալ նեղուցներին նախքան խաղաղությունը կամ էլ այնքան մտռեմալ դրանց, որ հարցի լուծման ժամանակ կարողանանք պատշաճ ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Առանց այս ամենի մենք դժվար թե երբևէ կտանանք Կ. Պոլսը և նեղուցները, և համաձայնությունը դրանց մասին կդառնա սովորական թղթի կտոր» [1]: Այս հավաժից պարզ երևում է, որ ինչպես ցարական, այնպես էլ ժամանակակից կառավարությունը պատերազմում առաջնահերթ նպատակ էր դրել տիրանալ նեղուցներին և Կ. Պոլսին, ապահովելով մտավայրություն ունենալ, որ դաշնակիցները կարող են հետագայում հրաժարվել այս պայմաններից, ուստի առաջարկում էր պարզապես նվաճել նեղուցները: Խնդիրը նրանում էր, որ դաշնակիցներն այս քայլը կդիտեին որպես Ռուսաստանի կողմից իր պատերազմը շուտ ավարտելու փորձ և դժվար թե հանդուրժեին այն: Այս նույն գաղափարը հետագայում արտահայտում է նաև ժամանակակից կառավարության արտաքին գործերի նախարար Սիլյուկովը: Կաղեխների կուսակցության համագումարում նա ընդգծեց, որ Կ. Պոլսի և նեղուցների գրավումն իր քաղաքականության հիմնական խնդիրն էր, որը «կարմիր թելի» մասն անցնում էր Սիլյուկովի բոլոր բանակցությունների ժամանակ, սակայն նշում է, որ պայքարի իր բոլոր փորձերն անպատիվ էին այն տեսակետի կողմնակիցների համար, ովքեր գտնում էին, որ Ռուսաստանը դաշնակիցների առջև պետք է հրաժարվի նեղուցներին տիրանալու գաղափարից: [2] Այս երկրորդ տեսակետի կողմնակիցները գիտնել էին հաշտվողական դիրք՝ ստեղծված պայմաններից ելնելով և գտնում էին, որ Ռուսաստանն ի վիճակի չէ պահանջել համաձայնագրերով իրեն հասանելիքը և ավելի լավ է հրաժարվի այդ մտքից, քան թե անպատիվ վեճի մեջ մտնի դաշնակիցների հետ, դրանով իսկ վատթարացնելով իր հարաբերությունները նրանց հետ: Պարտավորական այս տեսակետը հարված էր հասցնում նաև Արևմտյան Հայաստանին, քանի որ համաձայնագրերից մեկն էլ Մայրս-

Պիկոն էր, որով և ավարտվեցին Թուրքիայի բաժանման բանակայությունները, և այս համաձայնագրում Ռուսաստանին անցնելիք տարածքները դրված էին ոչ թե առանձին-առանձին, այլ փաթեթով՝ Կ. Պոլիս, նեղուցներ և Արևմտյան Հայաստանի մի մասը: Այս պայմաններում Ռուսաստանը պետք է հրաժարվեր ոչ միայն նեղուցներից ու Կ. Պոլսից, այլև Արևմտյան Հայաստանի իրեն անցած մասից: Պոկոլսկու հիմնավորումներն, այս խնաստով, ավելի խեղամիտ էին, քանզի առաջին անգամ չէ, երբ Անգլիան ու Ֆրանսիան միավորվելով Ռուսաստանի դեմ, վերջինիս փաստի առաջ էին կանգնեցնում և պարտադրում մահանջել, սակայն նախարարը հաշվի չէր առնում ռուսական բանակում 1917թ. սկզբին տիրող իրական վիճակը (բուլշևիկյան քարազույթյուն, դասալքություն, Կովկասյան ճակատի քայքայում), որը թույլ չէր տա գեներլի ուժով տիրանալ նեղուցներին և Կ. Պոլսին:

Երկիշխանությունը ստղակել էր քաղաքականության ոչ միայն ներքին, այլև արտաքին ոլորտը: Պայքար էր ընթանում ճշված տեսակետների շուրջ և գաղափարում մտնեցող հասանքները փորձում էին որոշել Ռուսաստանի հետագա արտաքին քաղաքականությունը: Դրա արդյունքում ծնվեց 1917թ. մարտի 27-ի դեկլարացիան, որը փոխզիջումային էր երկու հոսանքների միջև: Հռչակագրում տեղ էր գտել նաև իշխանության վերադարձումը փոքր ժողովուրդների հիմնահարցերի նկատմամբ. «Ժամանակավոր կառավարությունը հայտարարում է, որ ազատ Ռուսաստանի նպատակը ոչ թե այլ ժողովուրդների վրա տիրապետության հաստատումն ու նրանց ազգային արժանապատվության ոտնահարումն է, օտար տարածքների բռնագրավումը, այլ ամուր խաղաղության հաստատումը ժողովուրդների ինքնորոշման հիմքի վրա: Ռուս ժողովուրդը չի ձգտում իր արտաքին հզորության ուժեղացման ի հաշիվ այլ ժողովուրդների, նա իր առջև նպատակ չի դնում որևէ մեկին գերիշխելու կամ նսեմացնելու» [3]: Այս փոխզիջումային փաստաթուղթն իր մեջ ունի երկխառնություն, որը հնարավորություն էր տալիս երկու հոսանքներին այն մեկնաբանել իրենց ծրագրերին համապատասխան: Միանից առաժու էին փոքր ժողովուրդների շահերը, և Թուրքահայաստանի հարցն այս տեսակետից կարելի է մեկնաբանել մի քանի ձևով: Նոր նախարար Տերեշչենկոն փորձեց համատեղել անհամատեղելի մայիսի 6-ի հռչակագրում, որի մեջ ասված էր. «Ժամանակավոր կառավարությունը, արտաքին քաղաքականության մեջ մերժելով սեպարատ խաղաղության մասին ցանկացած միտք, բացահայտ իր առջև նպատակ է դնում հասնել համընդհանուր խաղաղության, որը խնդիր չունի գերիշխել այլ ժողովուրդների վրա, նսեմացնել նրանց ազգային արժանապատվությունը և բռնագրավել օտար տարածքներ, այլ նպատակ ունի առանց բռնակցումների և ռազմատուգանքների հասնել խաղաղության, ժողովուրդների ինքնորոշման հիմքի վրա» [4]: Այս հայտարարությանը Տերեշչենկոն փորձում էր համոզել հանգուստցուներին թե՛ դաշնակիցներին, որոնք պահանջում էին Ռուսաստանից չլինել սեպարատ հաշտություն, և թե՛ փոքր ժողովուրդներին ու մասնավորապես հայերին, որոնք Ռուսաստանից պահանջում էին ինքնորոշման իրավունք՝ ինքնավարության ձևով: Սակայն իրականում դա հնարավոր չէր, քանի որ մեծ տերությունները, հասնելով հաղթանակի և ջախջախելով թշնամիներին, այլև հաշվի չէին նստի փոքր ժողովուրդների շահերի ու իրավունքների հետ, այլ պետք է կիրառեին Սայքս-Պիկոյի դրույթները, ինչը Ռուսաստանի համար կլիներ լավագույն տարբերակը: Ինչ վերաբերում էր հին պայմանագրերի վերացմանը, ապա կառավարությունը սահմանափակվում էր բավականին մշուշոտ խոստումներով՝ ձեռնարկելու նախապատրաստական քայլեր դաշնակիցների հետ, մարտի 27-ի հռչակագրի հիմքի վրա, համաձայնության հասնելու համար [5]: Իբրևկանում ոչ մի քայլ էլ չկատարվեց: Նախարար Միլյուկովն իրեն ավելի համարձակ էր պահում և գտնում էր, որ Սայքս-Պիկոյի համաձայնագրում որոշակիորեն նսեմացված էին Ռուսաստանի շահերը ոչ թե նեղուցների, այլ մյուս տարածքների, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հետ կապված, քանի որ այս տարածքի մի մասը տրվել էր Ֆրանսիային: Հավանաբար այս համարձակությունն էր պատճառը, որ Միլյուկովը չուտավ փոխարինվեց ավելի հանդարտ Տերեշչենկոյով: Նախարարն փոփոխություն բերում է նաև քաղաքականության փոփոխության, եթե ոչ հիմնական, ապա գոնե հարակից հիմնահարցերում, որը պակաս կարևոր չէ: Տերեշչենկոյի քաղաքականությունը բացահայտվում է այն ժամանակ, երբ հանրահայտ «անեքսիա» տերմինին, որն ունի մեկ որոշակի խնաստ՝ բռնակցում, նա տալիս է 4 ձևակերպում՝

1. Գերեվարված և ճնշված ժողովուրդների ազատագրումը բռնակալությունից և տառապանքներից, որոնց նրանք ենթարկվել են մինչև ազատագրումը:
2. Արհեստականորեն բաժանված ժողովուրդների միավորում:
3. Անեքսիան ցանկալի է սուվերեն իրավունքներ մի տարածքի վրա ստանալու համար, որն անհրաժեշտ է ոչ թե հարձակման, այլ ռազմական դիրքեր գրավելու տեսանկյունից՝ հետագայում հարձակումներից պաշտպանվելու համար:
4. Տարածքներ ձեռք բերելու և քաղաքական ու տնտեսական ազդեցություն ծավալելու նպատակով կատարվող անեքսիա:

Նախարարի կարծիքով առաջին երեք անեքսիաները թույլատրելի են, իսկ չորրորդը՝ ոչ: Սա հմուտ փորձ էր արդարացնելու Ռուսաստանի կատարած անեքսիան: Առաջին և երկրորդ ձևերը հորինվել են փոքր ժողովուրդների աչքերին «թող փչելու» նպատակով, քանզի դա հիմնավորում էր անեքսիա իրականացնելու համար, այլ ոչ թե նպատակ: Իբրևկանում անեքսիայի միակ ձևակերպումը Տերեշչենկոյի ճշած 4-րդ ձևն է, որն ինքը մերժում է: Կարծում ենք, ժամանակավոր կառավարությանը համապատասխանում է «3-րդ ձևը», համաձայն որի Ռուսաստանն անեքսիայի էր ենթարկում Արևմտյան Հայաստանը ոչ թե հարձակման, այլ ռազմավարական դիրքեր գրավելու տեսանկյունից՝ հետագայում հարձակումներից պաշտպանվելու համար, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը ժամանակավոր կառավարությունը դիտում էր որպես «բռնիքային տարածք»՝ իր և դաշնակիցների ազդեցության գոտիների և տարածքների միջև:

Դաշնակիցների ղեկավանազիտական ճնշումը չէր դադարում, բոլոր անհաջողությունների մեղքը նրանք քարոզում էին Ռուսաստանի վրա: Անգլիական պատվիրակության ղեկավար Լլոթը Ջորջի խոսքերից երևում է, որ մայիսի 26-ին Անգլիան 1914-1916թթ. ընթացքում Կովկասյան ճակատը համարում էին երկրորդական և պարտադրում էր, որ Ռուսաստանն էլ այդ ձևով մտռեմա խնդրին, ապա 1917թ. նույն անգլիացիները անուղղակիորեն այս ճա-

կատին տալիս էին կարևոր ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական նշանակություն, ինչը, կարծում ենք, կապված էր Մայքս-Պիկոյի համաձայնագրից հետո ազդեցության գոտիների բաժանման հետ: Անգլիան և Ֆրանսիան այս համաձայնագրից և հատկապես Ռուսաստանի փետրվարյան հեղափոխությունից հետո, զգալի վերջինիս թուլությունը, ձգտում էին իրենց ազդեցության գոտիները ընդարձակել ի հաշիվ ռուսական գոտու: Օրինակ, Ֆրանսիան ձգտում էր իր ազդեցության գոտին ընդարձակել Ռուսաստանին անցած Արևմտյան Հասարակածի արևելյան մասի հաշիվին, իսկ Անգլիան փորձում էր Ռուսաստանին զրկել նեղուցներից և Կ. Պոլսից: Դաշնակիցները փորձում էին ամեն կերպ նսեմացնել Ռուսաստանի դերը պատերազմում և սպացուցել, որ Ռուսաստանը «վաստակ չունենալով» հաղթանակում, մեջ իրավունք չունի պահանջել տարածքներ: Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ղեկավարները Պետրոգրադում սեպտեմբերի 26-ին միասնական հայտարարությամբ են հանդես գալիս, որն ռեզոլյուցիոն անընդհատ հեղափոխական ցնցումները Ռուսաստանի ներսում), ինչպես նաև չափավոր բանակի հարձակումը, ապա կզրկվի բոլոր տեսակի օգնությունից՝ ռազմաժողովրդից, զենք, տնտեսական օգնություն: Դաշնակիցները խոստանում էին նաև Ռուսաստանի հետ հաշիվ չնստել ռազմական գործողությունների համաձայնեցման հարցում: Ռուսաստանը չկատարեց այս նախապայմանները, և դաշնակիցները կատարեցին իրենց խոստումը՝ զրկեցին Պետրոգրադին բոլոր տեսակի օգնությունից: Դիվանագիտական այս անցքերը ցույց են տալիս, որ Ռուսաստանը քայլ առ քայլ կորցնում էր իր տեղն ու դերը մեծ տերությունների շարքում, այն զիջելով արագ քայլերով զարգացող ԱՄՆ-ին: Բնականաբար, զրկվելով իր դիրքից, Ռուսաստանը կորցնում էր նաև համաշխարհային և տարածաշրջանային հարցեր լուծելու և որոշումներ կայացնելու իր իրավունքը: Սա վերաբերում էր նաև Արևմտյան Հայաստանի խնդրին: Ռուսաստանն այս հարցում արդեն ստիպված էր իր դիրքորոշումը հարմարեցնել դաշնակիցների պարտադրած սահմանների հետ:

Այդ նույն ժամանակ Անգլիայում և Ֆրանսիայում քննարկվում էր այն հարցը, թե հնարավոր չէ արդյոք խաղաղություն հաստատել ի հաշիվ Ռուսաստանի, այսինքն՝ զիջելով որոշ տարածքներ Ռուսաստանից և զոհաբերելով թույլ դաշնակցի շահերն ու ազդեցության գոտիները: Այս խնաստով չէր բացառվում նաև Ռուսաստանին անցած Արևմտյան Հայաստանի հատվածի վերադարձը Թուրքիային: Սակայն հետագայում այս մտտեցումը մերժվեց, քանի որ դաշնակիցները հասկացան, որ առանց այդ էլ Ռուսաստանն արդեն թույլ էր, իսկ նրա տարածքների զիջումը հակառակորդին ավելի կուժեցնեց վերջինիս: 1917թ. կեսերին արդեն զգացվում էր, որ մոտ է պատերազմի ավարտը, բոլոր պատերազմող կողմերը հոգեմտ էին երկարատև, դաժան և հյուծիչ պատերազմից, ծախսել էին հսկայական միջոցներ, տվել էին անեղին զոհեր, սակայն դեռևս բացահայտ առավելության ոչ մի կողմը չէր հասել: Բոլոր կողմերը նախապատրաստվում էին խաղաղության կնիքի փոխանակման, իսկ Ռուսաստանը պետք է մասնակցեր Մոսկվա, որին բանակցությունների ժամանակ տրված էին հետևյալ ցուցումները՝ հռչակվում էր առանց բռնակցումների և ռազմատուգանքների խաղաղության ժողովուրդների ինքնորոշման հիմքի վրա: Գործնականում այդ սկզբունքը պետք է կիրառվեր միայն Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էլզաս-Լոթարինգիայի և Թուրքահայաստանի հարցում [6]: Ինչպես տեսնում ենք, Թուրքահայաստանը ժամանակավոր կատարության համար կենսական նշանակություն ունեցող տարածքների թվում էր, որի համար Ռուսաստանը իբր պետք է պահանջեր ինքնավարություն խաղաղության բանակցություններում: Սակայն Թուրքահայաստանը այդ տարածքների շարքում նշված էր վերջինը՝ Լեհաստանից, Լատվիայից և Լիտվայից հետո: Սա պետք է համարել բնական, քանի որ Ռուսաստանի համար առաջնային վտանգ էր ներկայացնում Գերմանիան և Լեհաստան-Լիտվա-Լատվիա գոտին պետք է լիներ «ինքնավար», որպես բուֆերային գոտի Գերմանիայի և Ռուսաստանի միջև, նոր դրանից հետո Թուրքահայաստանը պետք է լիներ «ինքնավար», որպես բուֆերային գոտի Ռուսաստանի և Անգլիայի ու Ֆրանսիայի ազդեցության գոտիների ու ոլորտների միջև, եթե կիրառվեին Մայքս-Պիկոյի դրույթները, իսկ եթե ոչ, ապա Թուրքահայաստանը բուֆեր պետք է լիներ Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Ինչ վերաբերում է Էլզաս-Լոթարինգիայի ինքնորոշմանը, ապա այն նշված էր դիվանագիտական հաշիվներից ելնելով, որ Ֆրանսիան, որը շահագրգռված էր այս տարածքի ինքնորոշմանը, իր հերթին հավանություն տար Ռուսաստանի ներկայացրած տարածքների ինքնորոշմանը:

Անդրադառնալով կայանայից կոնֆերանսին և այնտեղ նախատեսված պայմանագրերի վերանայման հարցի քննարկմանը, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Տերեշչենկոն նշում էր. «Համաձայնագրի վերանայումը անհրաժեշտ է ոչ միայն սկզբունքային, այլև ռեալ իրավիճակի, այսինքն՝ շահավետության և դրա իրականացման տեսանկյունից: Այս խնաստով պետք է խոստովանել, որ Փոքր Ասիայում մեր ձեռքբերումների մասին համաձայնագրերը մեզ համար վնասակար են, քանի որ փորձաքննարկված տարածքների բաժանումը 4 տերությունների (ըստ Մայքս-Պիկոյի դրանք են՝ Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Իտալիա) միջև հետագայում լուրջ վտանգ է ներկայացնելու, հատկապես նեղուցների հարցի ոչ լրիվ լուծման դեպքում (ընդգծումը Ա.Մ.) [7]: Այդ իսկ պատճառով ինքնորոշման սկզբունքի կիրառումը ոչ միայն զարսիտարական խնաստով, այլև մեր կենսական շահերի տեսանկյունից պետք է ճանաչել ավելի նպատակահարմար» [8]:

Փաստորեն ժամանակավոր կատարությանը Թուրքահայաստանի ինքնորոշման հարցը առաջ էր քաշում ոչ թե հայերին իսկապես ինքնավարություն տալու, այլ այս ձևով Փոքր Ասիայի բաժանմանը խանգարելու նպատակով, քանի որ վտանգ կար, որ դաշնակիցները կփորձեն այդ բաժանումը կատարել առանց Ռուսաստանի՝ օգտվելով վերջինիս թուլությունից: Այսպիսով, Արևմտյան Հայաստանի ռուսական գոտին կարող էր ևս խլվել Ռուսաստանից, այդ իսկ պատճառով Տերեշչենկոն առաջ էր քաշում այս տարածքի ինքնորոշման հարցը, ակնկալելով, որ նույնը պետք է կատարվի նաև անգլիական և ֆրանսիական գոտիներում՝ այլ փոքր ժողովուրդների հետ կապված: Տերեշչենկոն վնասակար էր համարում Փոքր Ասիայի տարածքների բաժանումը հատկապես նեղուցների հարցի ոչ լրիվ լուծման դեպքում (լրիվ լուծման տակ հասկացվում էր նեղուցների անցումը Ռուսաստանի տիրապետության տակ), այսինքն՝ եթե Ռուսաստանը կորցնեք նեղուցները, ըստ Տերեշչենկոյի այլևս խնաստ ունեն «պայքարել» Արևմտյան Հայաստանի արևելյան մասի համար, քանի որ Բուֆոր-Դարդանելի վրա վերա-

հսկողությունը թույլ կտար Աւ ծովում ազատ գործել բոլոր երկրների ռազմական նավերին, իսկ Ռուսաստանը կզրկվեր Միջերկրական ծով իր ռազմանավերը դուրս բերելու հնարավորությունից: Այս հանգամանքը մեկ անգամ ևս ապացուցում էր այն դրույթը, որ Արևմտյան Հայաստանը Պետրոգրադի համար եղել է միջոց ներդրման ու Կ.Պոլսին հասնելու համար, իսկ նպատակի բացակայության դեպքում միջոցը ևս կորցնում է իր նշանակությունը: Այս հարցի շուրջ քննարկումներ են եղել ժամանակավոր կառավարությունում և կարծիքներն ու մտտեցումները կիսվել են: Այստեղ ևս ի հայտ է եկել տարբեր հակամարտող հասանքների և միջգերատեսչական պայքարը: Ժամանակավոր կառավարության ռազմական մախարար Վերլիտվսկին ընդգծեց այն միտքը, թե ժամանակն է բարձր և գեղեցիկ խտրեքից անցնել դրության սթապի գնահատմանը, պետք է դրույթը թե ինչն է Ռուսաստանի «գրպանով» և ինչը ոչ: Նախարարը նշեց. «Եթե միջոցներ չկան ավելի լավ խաղաղության համար, ապա պետք է կնքել այնպիսի խաղաղություն, որն այժմ հնարավոր է, հակառակ դեպքում դրությունն ավելի կվատանա» [9]: Բացի դրանից ռազմական մախարարն առաջարկում էր դաշնակիցների վերջնագրին պատասխանել շանտաժով, ավելի ճիշտ շարունակել շանտաժը, ասելով, որ ռուսական բանակը ի վիճակի չէ ռազմական գործողություններ վարել և պետք է խաղաղություն կնքել, եթե դաշնակիցները չհամաձայնվեն, Ռուսաստանը կկնքի սեպարատիստ հաշտություն և դուրս կգա պատերազմից, այդ դեպքում հակառակորդի բոլոր դիվիզիաները կուղղվեն նրանց դեմ: Ռազմական մախարարը գիտեր, թե ինչ գնով է ձեռք բերվել Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի համար և չէր ուզում, որ այս տարածքը դառնա շահարկման առարկա: Նրա կարծիքով Տերեշչենկոյի քաղաքական «գրեֆը» չէր աշխատելու, քանի որ դաշնակիցներն այս տարածքը ևս կվերցնեին Ռուսաստանից: Իսկապես ռազմական մախարարի գնահատականները շատ ռեալ էին՝ եթե Ռուսաստանը մտադիր էր ինքնուրուշում տալ Թուրքահայաստանին, ապա թող դա կատարվեր Ռուսաստանի հովանու տակ, Թուրքահայաստանին ինքնավարություն տալու ձևով, այլ ոչ թե այս տարածքները և բնակչությանը քաղաքական խաղի առարկա դարձնելու եղանակով: Տերեշչենկոյի ծրագիրը պարզապես բախտախնդրություն էր, քանի որ նա «քարտեզի վրա էր դնում ամեն ինչ» և արդյունքում Ռուսաստանը կարող էր կորցնել այդ ամեն ինչը, այսինքն՝ գոնե Թուրքահայաստան, ուլենայու փոխարեն: Ցավոք, ռազմական մախարար Վերլիտվսկու օրելակով մտեցումը չընդունվեց ոչ այն պատճառով, որ այն ավելի ռեալ էր Ռուսաստանի պետական շահերի տեսանկյունից, և որ այն ավելի մեծ երաշխիքներ էր պարտադրում Արևմտյան Հայաստանի և արևմտահայության համար, այլ նախևառաջ այն պատճառով, որ այն հակադրվում էր դաշնակիցների պահանջներին, իսկ ժամանակավոր կառավարության մախարարների մեծ մասը Ռուսաստանի առաջընթացը և ճգնաժամից դուրս գալը կարծում էր միայն դաշնակիցների հետ: Այս պայմաններում Վերլիտվսկին հրաժարական տվեց, քանզի նա մենակ էր մնացել: Գործը հասնում է այնտեղ, որ ժամանակավոր կառավարությունը, տեսնելով դաշնակիցների անբարյացակամ վերաբերմունքը ինքնուրուշում գաղափարի համոզել, անմիջապես հրաժարվում է դրանից: Ժամանակավոր կառավարությունն այն աստիճան անօգնական էր, որ անգամ թույլ դիվանագիտական ճնշման տակ հրաժարվում էր այն դրույթներից, որոնք իր համար կենսական նշանակություն ունեին: Այս տեսակետից ժամանակավոր կառավարության քաղաքականությունը կարելի է համարել «սիտուացիոն», քանի որ որոշումներն ընդունվում էին պահի ազդեցության տակ և անընդհատ մայելով դաշնակիցների կողմը:

Արտաքին քաղաքականության բնագավառում հարկ է հիշատակել նաև 1917թ. Եվրոպայում հայ ազգային պատվիրակության գործունեությունը Պողոս-Նուբար փաշայի գլխավորությամբ: Այս ժամանակահատվածում նա ջանում էր եվրոպական պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի աջակցությամբ նախապատրաստել Հայկական հարցի քննարկումը և այն ներկայացնել մոտ ապագայում սպասվող հաշտության վեհաժողովին [10]: Եթե մինչև փետրվարյան հեղափոխությունը Պողոս-Նուբարը այս գործունեությունը ծավալում էր որոշ վերապահումներով և Ռուսաստանի դեսպանին այդ գործընթացի մասին տեղյակ պահելով, ապա հեղափոխությունից հետո նա արդեն շրջադարձ կատարեց դեպի Ֆրանսիա, հույս կապելով միայն Փարիզի հետ: Այս բանակցություններում արդեն բացառվում էր Արևմտյան Հայաստանի անկախության պահանջը և որպես Հայկական հարցի լավագույն լուծում ընդունվում էր Հայաստանի հովանավորությունը դաշնակիցների կողմից: Այս հարցում Պողոս-Նուբարը գերապատվությունը տալիս էր Ֆրանսիային [11]: Մակայն, ինչպես իրավացիորեն նկատում է Վ.Միլիքյանը, Պողոս-Նուբարը թույլ էր տալիս քաղաքական անհեռատեսություն, քանի որ անկախ այն հանգամանքից, թե նրան դուր էր գալիս Ռուսաստանի իրավակարգը, քաղաքականությունը և ընդհանրապես Ռուսաստանը, թե ոչ, Արևմտյան Հայաստանի մեծ մասն արդեն գրավված էր ռուսական բանակի կողմից և գտնվում էր նրա տիրապետության տակ: Ուստի Պողոս-Նուբարի այս քայլերն ավելի շատ վնասում էին հարցի լուծմանը, քան օգնում: Այդ պատճառով ավելի էին սրվում ռուս-ֆրանսիական հակասությունները նշված տարածքների հարցում, սակայն տվյալ պայմաններում հակասությունները օգուտ հայերի համար, քանի որ ուժերն անհավասար էին, Ռուսաստանն արդեն թուլացել էր, իսկ Ֆրանսիան առաջնորդվում էր միայն բռնակցումներ կատարելու սկզբունքով, առանց հաշվի առնելու բռնակցվող աղաքածքի բնակչության շահերն ու ցանկությունները: Այս իմաստով հատկապես արտաքին քաղաքականության մեջ քայլերը պետք է կատարվեն ելնելով ռեալ իրավիճակից և չի կարելի ցանկալին շփոթել կարելիի հետ, անհրաժեշտ էր հաշվի առնել սկզբունքը, թե մեծ տեղություններից որն էր ավելի մոտ կանգնած հայ ժողովրդին, և որն էր իր շահերի հետ մեկտեղ որոշ չափով հաշվի առնում նաև հայերի շահերը: Այս իմաստով ամառարկելի է Գ. Անանյանի հետևյալ միտքը. «Ամեն մի հայ պետք է իմաստունություն ունենա դատելու, որ նրա անվտանգ գոյությունը պայմանավորված է Ռուսաստանի ամբողջական անվտանգ գոյությամբ» [12]:

Ամբողջությամբ վերցրած ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականությունը 1917թ. Թուրքահայաստանի և թուրքահայերի նկատմամբ ուներ իր օրյելակով և սուրյելակով պատճառները, և դրանցից բխող բացասական և դրական կողմերը: Ռուսաստանում կենտրոնական իշխանության թուլացումը, հեղափոխական և ազգային շարժումների վերելքը, պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում, օտարերկրյա կառավարությունների ներքին գործերին խառնվելը, ազգային խորհուրդների հանդես գալը,

քաղաքական կուսակցությունների ակտիվացումը և ազգային գորամիավորումների ստեղծման խնդիրը՝ ահա այն հարցերի ողջ փաթեթը, որի պայմաններում ժամանակավոր կառավարությունը պետք է լուծեր ազգային հիմնահարցերը [13]:

Այս պայմաններում կառավարությունը փորձում էր ինչ որ քայլեր ձեռնարկել, սակայն դրանք կամ ի սկզբանե անհաջողության էին մատնվում, կամ մնում էին անավարտ: Հակասությունների այս ամբողջական փաթեթը մեղմելու հետևանքով զնալով զրոյի էր հավասարվում: Մի կողմից ժամանակավոր կառավարության որոշումներն ու հռչակագրերը հույս էին ներշնչում փոքր ժողովուրդներին և պատրանք ստեղծում, որ շուտով լուծվելու են ազգային հարցերը, մյուս կողմից այդ որոշումները մնում էին թղթի վրա և չէին իրագործվում: Ազգային կրքերը հանդարտեցնելու նպատակով ժամանակավոր կառավարությունը հավատախախտում էր, որ ազգային հարցի լուծմանը կանոնադաշտ մատակարար Սահմանադիր ժողովը [14]: Դե յուրե սա լրիվ արդարացված էր, քանի որ հենց ինքը՝ ժամանակավոր կառավարությունը պետք է գոյություն ունենար մինչև Սահմանադիր ժողովը, և այս մարմինն էր, որ պետք է վճեր Ռուսաստանի հետագա ճակատագիրը, իսկ դե ֆակտո պարզ էր, որ ժամանակավոր կառավարությունը, որն այս անցումային փուլում իր վրա էր վերցրել երկրի կառավարումը, ի վիճակի չէր լուծելու և ոչ մի կարևոր հարց ընդհանրապես, և բոլոր հարցերը, այդ թվում և ազգայինը հետաձգվում էին՝ թողնելով Սահմանադիր ժողովին և հայտնի չէր, թե երբ է գումարվելու այդ ժողովը, արդյունքում ժամանակը անցնում էր, իսկ հարցերը մնում էին չլուծված:

Այս իրավիճակի վրա էական ազդեցություն էր թողնում պատերազմը: Ինչ վերաբերում է Կովկասյան ճակատին, ապա Ռուսաստանի համար պատերազմն այս ճակատում համարվում էր ավարտված, և փետրվարյան հեղափոխությունից հետո, ժամանակավոր կառավարությունն իր ուժերը համախմբել էր առավել կենսական մշահակություն ունեցող Արևմտյան ճակատի վրա՝ փրկելու Ռուսական կայսրության հսկայական տարածքները [15]: Ինչ խոսք, շատ էին մահ սուբյեկտիվ պատճառները, երբ ժամանակավոր կառավարության անգործության և անհետևողական քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում տեղի էին ունենում բազմաթիվ չարաշահումներ, որոնք մեծ վնաս էին հասցնում արևմտահայությանը: Այս բացասական երևույթների կողքին, սակայն, անպայման պետք է տեսնել մահ դրականը՝ օբյեկտիվ պատկերը ստանալու համար: Կարծում ենք, որ չի կարելի չհամաձայնվել Վ.Միլիքյանի հետ այն հարցում, որ ժամանակավոր կառավարությունը ցարիզմը տապալելով հայ իրականությանը հնարավորություն տվեց հասնելու երկու իրական միակամների՝ Հայոց Ազգային խորհրդի և Ազգային կուրյուսի ստեղծմանը, որոնց շուրջ էլ 1918թ. ձևավորվեց Հայաստանի Հանրապետությունը [16]: Մենք իրավունք ունենք ժամանակավոր կառավարությանը մեղադրել այն բաների համար, որոնք մահ կարող էր անել, բայց չարեց, սուբյեկտիվ պատճառներով, սակայն ճիշտ չի լինի նրան մեղադրել այն բաների համար, որոնք մահ օբյեկտիվորեն ի վիճակի չէր անել:

Խորհրդային պատմագրությունը նույնացնում է ցարական և ժամանակավոր կառավարության քաղաքականությունը բացասական իմաստով, ոչ մի տարբերություն չգտնելով դրանց մեջ: Մեր կարծիքով, այս երկու կառավարություններն ունեն մեկ ընդհանուր և գլխավոր գիծ՝ նրանք երկուսն էլ փորձում էին պաշտպանել և իրագործել Ռուսաստանի ազգային, պետական շահերը, սակայն յուրաքանչյուրը դա անում էր յուրովի: Այս ենթատեքստում Հայկական հարցի առնչությամբ սխալ է ժամանակավոր կառավարության քայլերը Թուրքահայաստանի վերաբերյալ միանշանակ որակել որպես աչքակապություն, խարխուլություն և այլն: Ի տարբերություն ցարական կառավարության, ժամանակավոր կառավարությունը զոհեց փորձում էր անել ինչ-որ բան, այլ խնդիր է, որ այս կառավարությունն ավելի թույլ էր և ավելի վատ վիճակում էր և պատճառներից մեկն այդ էր, որ ընդունված որոշումները չէին կատարվում: Ունենալով ուժեղ իշխանություն՝ ցարական կառավարությունը մնում որոշակի քայլերի չգնաց: Եվ ընդհանրապես, համեմատելով այս երկու կառավարությունների վարած քաղաքականությունը Հայկական հարցում Հայոց Ցեղասպանությունից հետո, պետք է արձանագրել, որ չնայած անընդհատ շարունակվում էր միջգերատեսչական պայքարը այս հարցի շուրջ և գոյությունը պահպանում էին երկու հոսանքները՝ հայանպաստ և հակահայկական, ի տարբերություն ցարական կառավարության ժամանակահատվածի, երբ գրեթե միշտ հաղթող էր դուրս գալիս հակահայկական հոսանքը, ժամանակավոր կառավարության շրջանում, ավելի դեմոկրատական քաղաքական գործիչների մուտքով Ռուսաստանի քաղաքական դաշտ, ուժերի հարաբերակցությունը որոշակիորեն փոխվեց և կշեռքի մտարը թեքվեց դեպի հայամետ հոսանքը, ինչը շատ կարևոր էր հայ ժողովրդի համար:

Ժամանակավոր կառավարությունը, որն անընդհատ ճնշվում էր դրախցի ու ներսից, ի վերջո դադարեց գոյություն ունենալ 1917թ. հոկտեմբերին, գոյատևելով ընդամենը ութ ամիս և չհասցնելով ավարտին հասցնել և ոչ մի կարևոր գործ կամ նախաձեռնություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Васьков В.С. Внешняя политика Временного правительства. - М., 1975, с. 103.
- [2] Նույն տեղում, էջ 439:
- [3] Նույն տեղում, էջ 101:
- [4] "Армянский вестник", № 3, 1918, с. 2.
- [5] Васьков В.С. Внешняя политика..., с. 94.
- [6] Նույն տեղում, էջ 451:
- [7] Նույն տեղում, էջ 126:
- [8] Միլիքյան Վ.Վ., «Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917թ.», Պատմա-բանասիրական հանդես, Եր., (1-2), էջ 129:
- [9] Васьков В.С. Внешняя политика..., с. 13.
- [10] Նույն տեղում:
- [11] Նույն տեղում, էջ 470:
- [12] Միլիքյան Վ.Վ., Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը..., էջ 129:
- [13] Նույն տեղում, էջ 122:
- [14] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տեղությունները 1917-1923թթ., Եր., 1999, էջ 12:
- [15] Միլիքյան Վ.Վ., Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը..., էջ 130:
- [16] Նույն տեղում: